**Ամփոփ նյութ**

**«ԱՐՄԱՆ ՔՈՍՅԱՆ» ԱՁ (ԼԻՑԵՆԶԻԱ՝ ԹԻՎ 230) ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿԵՏԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ «Արման Քոսյան» ԱՁ (լիցենզիա՝ թիվ 230) փոխանակման կետի նկատմամբ կիրառվել է պատասխանատվության միջոց՝ արժութային գործունեությունը կարգավորող իրավական ակտերի պահանջների խախտման համար:

Ստորև ներկայացված է որոշման վերնագիրը և եզրափակիչ մասը:

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀ**
**ՈՐՈՇՈՒՄ**
**01/12/2023 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1/604 Ա**
**«ԱՐՄԱՆ ՔՈՍՅԱՆ» ԱՁ (ԼԻՑԵՆԶԻԱ՝ ԹԻՎ 230) ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿԵՏԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1. Սույն որոշման նկարագրական մասում նշված խախտումները թույլ տալու համար **«Արման Քոսյան» ԱՁ (լիցենզիա՝ թիվ 230) փոխանակման կետի նկատմամբ կիրառել տուգանք՝ 6.000.000 (վեց միլիոն) ՀՀ դրամ գումարի չափով,** որից՝

- 2.000.000 (երկու միլիոն) ՀՀ դրամ գումարի չափով տուգանքը՝ Արձանագրության 1-ին կետում արձանագրված խախտումները թույլ տալու համար,
- 4.000.000 (չորս միլիոն) ՀՀ դրամ գումարի չափով տուգանքը՝ Արձանագրության 2-րդ և 3-րդ կետերում արձանագրված խախտումները թույլ տալու համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Փոխանակման կետ մուտքագրվելու կամ Փոխանակման կետի՝ սահմանված կարգով լիազորված անձին հանձնվելու օրվան հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀ՝ ՄԱՐՏԻՆ ԳԱԼՍՏՅԱՆ**